

**«ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ  
ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ»**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

Համարը

N 2176-Ն

Տեսակը Ինկորպորացիա

Տիպը

Որոշում

Կարգավիճակը Գործում է

Սկզբնաղբյուրը

ՀՀՊՏ 2003.02.20/10(245) Հոդ. 168

Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը

ՀՀ կառավարություն

Ընդունման ամսաթիվը 26.12.2002

Ստորագրող մարմինը

ՀՀ Վարչապետ

Ստորագրման ամսաթիվը 24.01.2003

Վավերացնող մարմինը

ՀՀ Նախագահ

Վավերացման ամսաթիվը 04.02.2003

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը

21.02.2003

Ուժը կորցնելու ամսաթիվը

**☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Վավերացնում

եմ»

Հայաստանի

Հանրապետության

Նախագահ

Ռ.

Քոչարյան

4 փետրվարի 2003 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 դեկտեմբերի 2002 թվականի N 2176-Ն

**«ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական հիմնարկը վերակազմավորման ձևով վերակազմակերպել «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասի «գ», «ե» և «է» կետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

4. Սահմանել, որ «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ»

պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակը կրթական, գիտական, փորձագիտական, հրատարակչական գործունեության իրականացումն է:

5. Թույլատրելի «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) բարձրագույն, հանրակրթական (ավագ դպրոց), միջին և հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպում.

բ) օտարերկրյա դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում.

գ) գիտամանակավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում.

դ) հրատարակչական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում.

ե) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.

զ) կինո և տեսաֆիլմերի արտադրություն.

է) կինո և տեսաֆիլմերի տարածում.

ը) թատերական գործունեություն.

թ) կազմակերպություններին կից ճաշարանների ծառայություններ:

**(5-րդ կետը լրաց. 25.09.03 N 1283-Ն, 19.05.05 N 603-Ն, 12.04.07 N 550-Ն, փոփ. 27.01.11 N 59-Ն)**

6. «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական հիմնարկի տնօրինության գույքը, բացառությամբ շենքերի, շինությունների, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական հիմնարկի տնօրինության շենքերը, շինությունները Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով իրենց սպասարկման հողատարածքներով, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

**(6-րդ կետը լրաց. 09.06.05 N 888-Ն)**

7. Սահմանել, որ՝

ա) մինչև վերակազմակերպումը՝ «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական հիմնարկին «Հայաստանի Հանրապետության 2002 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հատկացումները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տեղական զանձապետական բաժանմունք ներկայացված բյուջետային ծախսերի նախահաշիվների հիման վրա՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ դրանց տնտեսագիտական բովանդակությանը համապատասխան:

Նշված հատկացումները «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական հիմնարկի վերակազմակերպումից հետո ներառվում են «Երևանի

թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվելիք պայմանագրերում.

բ) «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական հիմնարկի վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվում են «Հայաստանի Հանրապետության 2002 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի «ժէ» կետին համապատասխան:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի  
վարչապետ**

**Հանրապետության**

**Ա. Մարգարյան**

2003 թ. հունվարի 24  
Երևան

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### «ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ինստիտուտ) կրթական, գիտական, մշակութային պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացմանը:

2. Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի հուլիսի 27-ի N 346 որոշմամբ:

3. Ինստիտուտի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

#### 3.1. (կեսն ուժը կորցրել է 10.07.13 N 725-Ն)

4. Ինստիտուտը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ իրեն ամրագրված խնդիրներին համապատասխան իրավունքներ և պարտականություններ:

5. Ինստիտուտը կարող է իր գործունեության նպատակներին համապատասխան իրականացնել ուսումնական, հետազոտական, փորձագիտական վճարովի ծառայություններ և ուսուցում՝ օրենքով ու Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

6. Ինստիտուտն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվ:

7. Ինստիտուտն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

8. Ինստիտուտի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

հայերեն կրճատ՝ «ԵԹԿՊԻ» ՊՈԱԿ.

ռուսերեն լրիվ՝ «Ереванский государственный институт театра и кино» государственная некоммерческая организация.

ռուսերեն կրճատ՝ ЕГИТК ГНО.

անգլերեն լրիվ՝ "Yerevan State Institute of Theatre and Cinematography" state non-commercial organization.

անգլերեն կրճատ՝ YSITC SNCO:

9. Ինստիտուտի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ.

Երևան, Ամիրյան 26:

## II. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

10. Ինստիտուտի գործունեության առարկան և նպատակը կրթական, գիտական, փորձագիտական և հրատարակչական գործունեության իրականացումն է:

11. Ինստիտուտի խնդիրներն են՝

ա) բեմարվեստի, թատերագիտության, կինոգիտության և կինոարվեստի բարձր որակավորմամբ մասնագետների, գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների վերապատրաստումն ու մասնագիտական որակավորման բարձրացումը.

բ) բեմարվեստի, թատերագիտության, կինոգիտության և կինոարվեստի բնագավառներում գիտական-ուսումնամեթոդական ու գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը.

գ) թատերական և կինոարվեստի պրոպագանդումը, թատերական ու կինոարվեստի տեսական, ուսումնամեթոդական և գիտական մշակումների տարածումը.

դ) սփյուռքի հետ կապերի զարգացումը:

12. Ինստիտուտն առաջադրված խնդիրներին համապատասխան իրավասու է՝

ա) կազմելու ուսումնական պլաններ ու ծրագրեր.

բ) շնորհելու ինստիտուտի պատվավոր կոչումներ, սահմանելու մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրելու ինստիտուտի մեդալով.

գ) իր կողմից կնքված պայմանագրերի հիման վրա իրականացնելու ուղղակի կապեր հանրապետության և օտարերկրյա բուհերի, գիտական հիմնարկների, մշակութային կազմակերպությունների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ.

դ) սահմանված կարգով կազմակերպելու ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների և հայցորդների ընդունելությունն ինստիտուտ.

ե) տնօրինելու իր ֆինանսական միջոցները:

13. Ինստիտուտը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) բարձրագույն, հանրակրթական (ավագ դպրոց), միջին և հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպում.

բ) օտարերկրյա դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում.

գ) գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում.

դ) հրատարակչական գործունեության ծավալում.

ե) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.

զ) կինո և տեսաֆիլմերի արտադրություն.

է) կինո և տեսաֆիլմերի տարածում.

ը) թատերական գործունեություն.

թ) կազմակերպություններին կից ճաշարանների ծառայություններ:

**(13-րդ կետը լրաց. 25.09.03 N 1283-Ն, 19.05.05 N 603-Ն, 12.04.07 N 550-Ն, փոփ. 27.01.11 N 59-Ն)**

14. Ինստիտուտում արհեստակցական միության և այլ հասարակական կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրենց կանոնադրություններով:

### **III. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

15. Ինստիտուտի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան՝ ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների գուգակցմամբ, ինստիտուտի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ:

*(15-րդ կետը խմբ. 15.09.05 N 1724-Ն)*

16. *(կետն ուժը կորցրել է 15.09.05 N 1724-Ն)*

17. Լիազոր պետական մարմինը՝

ա) *(ենթակետն ուժը կորցրել է 15.09.05 N 1724-Ն)*

բ) իրականացնում է վերահսկողություն ինստիտուտի գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում ինստիտուտի ռեկտորի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու որոշումները.

դ) լսում է ինստիտուտի գործունեության մասին հաշվետվությունները.

ե) վերահսկողություն է իրականացնում ինստիտուտին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանման նկատմամբ, համաձայնություն տալիս ինստիտուտի սեփական գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

զ) *(ենթակետն ուժը կորցրել է 15.09.05 N 1724-Ն).*

է) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

*(17-րդ կետը փոփ., լրաց. 15.09.05 N 1724-Ն)*

18. Ինստիտուտի խորհուրդը կոլեգիալ կառավարման մարմին է, որն ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ սույն կանոնադրությանը համապատասխան, այդ ընթացքում խորհրդի անդամների մասնակի շրջափոխությամբ: Խորհրդի անդամների թիվը 24-ն է:

*(18-րդ կետը խմբ. 15.09.05 N 1724-Ն)*

18.1. Խորհուրդը ձևավորվում է ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացուցիչներից:

Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում հաստատության կառուցվածքային միավորները՝

ա) ինստիտուտի կառուցվածքային միավորների կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել հաստատության ցանկացած աշխատող.

բ) ինստիտուտի կառուցվածքային միավորներից առաջադրված անձանց թեկնածություններն ընտրվում են ինստիտուտի գիտական խորհրդում և ներկայացվում լիազոր մարմին.

գ) պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամները

կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

**(18.1-ին կետը լրաց. 15.09.05 N 1724-Ն)**

18.2. Ինստիտուտի ուսանողության ներկայացուցիչներից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների ուսանողական խորհուրդները՝

ա) ուսանողական խորհուրդների կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող ցանկացած սովորող (ուսանող կամ ասպիրանտ)։

բ) ինստիտուտի ուսանողական խորհուրդն ընտրում է ֆակուլտետներից առաջադրված սովորողների թեկնածությունները և ներկայացնում լիազոր մարմին։

գ) ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

**(18.2-րդ կետը լրաց. 15.09.05 N 1724-Ն)**

18.3. Հիմնադրի անունից խորհրդի անդամներ է առաջադրում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 25 տոկոսը):

**(18.3-րդ կետը լրաց. 15.09.05 N 1724-Ն)**

18.4. Լիազոր մարմնի կողմից խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ, ինչպես նաև ճանաչված գործատուներ (խորհրդի կազմի 25 տոկոսը):

**(18.4-րդ կետը լրաց. 15.09.05 N 1724-Ն)**

18.5. Առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա խորհրդի կազմը, լիազոր մարմնի ներկայացմամբ, հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

**(18.5-րդ կետը լրաց. 15.09.05 N 1724-Ն)**

18.6. Խորհուրդն իր կազմից, բացի ուսանողության ներկայացուցիչներից, ընտրում է նախագահ: Խորհրդի նախագահը չի կարող լինել նույն բուհում հաստիքային աշխատող (դեկան, ամբիոնի վարիչ, դասախոս): Խորհրդի նախագահը նույն բուհում պահպանում է ժամավճարի սկզբունքով դասախոսելու իրավունքը:

**(18.6-րդ կետը լրաց. 15.09.05 N 1724-Ն)**

18.7. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել՝

ա) իր դիմումի համաձայն:

բ) խորհրդի անդամի անգործության հիմնավորմամբ կամ մահվան պատճառով:

գ) խորհրդի անդամի թեկնածությունն առաջադրող մարմնի առաջարկությամբ:

դ) ըստ պաշտոնի առաջադրվելու դեպքում՝ պաշտոնից ազատվելու հետևանքով:

ե) որպես ուսանող առաջադրվելու դեպքում՝ ուսանողի կարգավիճակը կորցնելու հետևանքով:

**(18.7-րդ կետը լրաց. 15.09.05 N 1724-Ն)**

18.8. Խորհրդի անդամի լիազորությունները, լիազոր մարմնի ներկայացմամբ, դադարեցվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից:

**(18.8-րդ կետը լրաց. 15.09.05 N 1724-Ն)**

18.9. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համարվում է սույն կանոնադրության 18.1-18.5-րդ կետերի պահանջներին



համապատասխան:

Խորհրդի անգործության դեպքում հիմնադիրը կարող է վաղաժամկետ դադարեցնել խորհրդի նախագահի լիազորությունները կամ լուծարել խորհուրդը:

**(18-րդ կետը լրաց. 15.09.05 N 1724-Ն)**

19. Խորհրդի նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ: Դրանք համարվում են իրավագործ խորհրդի անդամների առնվազն 2/3-ի մասնակցության դեպքում: Խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ճայների պարզ մեծամասնությամբ, եթե խորհուրդը դրա մասին այլ որոշում չի ընդունում: Արտահերթ նիստերը հրավիրվում են խորհրդի անդամների 1/3-ի առաջարկությամբ:

**(19-րդ կետը խմբ. 15.09.05 N 1724-Ն)**

20. Խորհուրդը՝

ա) ընտրում է նախագահ՝ խորհրդի հերթական նիստերը վարելու և նիստերի միջև ընկած ժամանակահատվածում խորհրդի նիստերից բխող հանձնարարականների կատարմանը հետևելու համար.

բ) հաստատում է իր աշխատակարգը.

գ) խորհրդի անդամը պարտավոր է մասնակցել խորհրդի նիստերին, խորհրդի օրակարգային հարցերի քննարկումներին և կատարել խորհրդի որոշումներից բխող հանձնարարականները.

դ) խորհրդի գործունեության մեջ մտնում են ինստիտուտի բյուջեի, ռազմավարական ծրագրերի հաստատումը, ինստիտուտի գործունեության տարեկան հաշվետվության (որը ներկայացնում է ռեկտորը) լսումն ու գնահատումը, ռեկտորի ընտրությունը, ինչպես նաև ինստիտուտի կանոնադրության, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացնելը:

**(20-րդ կետը խմբ. 15.09.05 N 1724-Ն)**

21. Ինստիտուտի գիտական խորհուրդն ինստիտուտի ռեկտորի նախագահությամբ գործող ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող ու կարգավորող կառավարման մարմին է: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

22. Գիտական խորհուրդը՝

ա) հաստատում է իր կանոնակարգը.

բ) հատկացված ընդհանուր չափաքանակների սահմաններում, ինստիտուտի ռեկտորի ներկայացմամբ, հաստատում է վճարովի հիմունքներով, ըստ մասնագիտությունների, ընդունելության տեղերը.

գ) քննարկում է ինստիտուտի՝ օտարերկրյա պետությունների հետ կապերի ուղղությունները, միջազգային համագործակցության ծրագրերը և ինստիտուտի կողմից կնքվող միջազգային պայմանագրերի նախագծերը.

դ) մշակում է դիմորդների ընդունելության կանոնակարգի նախագծերը և դրանք ներկայացնում նախարարություն.

ե) ինստիտուտի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ինստիտուտի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ.

զ) հաստատում է ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների օրինակելի կանոնակարգերը, ներքին կարգապահական կանոնները.

է) քննարկում է ինստիտուտի ուսումնական մասնագիտությունների ու

մասնագիտացումների անվանացանկերը.

ը) հաստատում է ուսումնական պլանները՝ ըստ մասնագիտությունների, որոնք ներկայացվում են նախարարություն.

թ) քննարկում է ինստիտուտի գիտական գործունեության գլխավոր ու հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ ինստիտուտում կատարվող գիտահետազոտական և ուսումնական աշխատանքների արդյունքների մասին.

ժ) հաստատում է ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքացուցակը, կազմակերպում թափուր տեղերի թեկնածուների մրցութային ընտրությունները.

ժա) շնորհում է ինստիտուտի պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրում ինստիտուտի մեդալով, պատվոգրով, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար ներկայացնում է թեկնածություններ.

ժբ) իրականացնում է ինստիտուտի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ, որոնք բխում են սույն կանոնադրությունից.

ժգ) հաստատում է ինստիտուտի ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրությունների կարգերը:

**(22-րդ կետը փոփ., լրաց. 15.09.05 N 1724-Ն)**

23. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 60-ը:

24. Գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են ինստիտուտի ռեկտորը (նախագահ), պրոռեկտորները, ինստիտուտի գիտական քարտուղարը, ռեկտորի խորհրդականը, ուսումնական և գիտական վարչությունների (կամ մասերի) վարիչները (կամ պետերը), ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները, արհմիութենական կազմակերպության նախագահը, գրադարանի տնօրենը, ուսանողական խորհրդի նախագահը՝ ի պաշտոնե, ինչպես նաև ինստիտուտի ռեկտորի ընտրությամբ՝ կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետության գիտության և կրթության առաջատար մասնագետներ (ընդհանուր թվի մինչև 15 տոկոսի չափով):

25. Գիտական խորհրդի մյուս անդամներն ընտրվում են ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից՝ համաձայն գիտական խորհրդի կանոնակարգի:

26. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավագոր, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

**(26-րդ կետը փոփ. 15.09.05 N 1724-Ն)**

27. Ռեկտորատն ինստիտուտի ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որն ինստիտուտի խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, իր կանոնակարգով սահմանված լիազորությունների սահմաններում, քննարկում է ինստիտուտի գործունեությանը վերաբերող հարցեր:

28. Ռեկտորատի կազմի մեջ մտնում են ինստիտուտի ռեկտորը, պրոռեկտորները, ինստիտուտի գիտական քարտուղարը, ռեկտորի օգնականն ու խորհրդականը, ֆակուլտետների դեկանները, գիտական և ուսումնական վարչությունների (կամ մասերի) ղեկավարները:

**(28-րդ կետը փոփ. 15.09.05 N 1724-Ն)**

29. Ինստիտուտի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ ռեկտորը:

Ինստիտուտի ռեկտորն ընտրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով՝ ինստիտուտի խորհրդում, խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Ինստիտուտի ռեկտոր կարող է ընտրվել գիտամանկավարժական աշխատանքի փորձ ունեցող գիտությունների դոկտորի աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և (կամ) դոցենտի կոչում ու Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի կամ Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի, կամ Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի, կամ Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործչի պատվավոր կոչում ունեցող անձը: Նույն անձը չի կարող ավելի քան 2 անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:

Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է հիմնադիրը: Արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում, համաձայն գործող կարգի, նշանակվում է ռեկտորի նոր ընտրություն: Եթե նույն թեկնածուն ընտրություններում հավաքում է խորհրդի անդամների ձայների առնվազն երկու երրորդը, ապա հիմնադիրը հաստատում է խորհրդի որոշումը:

**(29-րդ կետը լրաց. 13.03.03 N 250-Ն, խմբ. 15.09.05 N 1724-Ն, լրաց. 27.01.11 N 59-Ն)**

30. Ինստիտուտի ռեկտորը՝

ա) ղեկավարում է ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը:

բ) ներկայացնում է ինստիտուտը Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում, կազմակերպություններում, հիմնարկներում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում:

գ) ապահովում է, ըստ մասնագիտությունների, մասնագետների պատրաստումը և գիտահետազոտական աշխատանքների կատարումը:

դ) կնքում է պայմանագրեր, բանկերում բացում հաշիվներ:

ե) սահմանում է ինստիտուտի կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները:

զ) կնքում է աշխատանքային պայմանագրեր սահմանված կարգով ընտրված ղեկանների, ամբիոնների վարիչների և դասախոսների հետ: Պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, սահմանում նրանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության շրջանակները:

է) հրավիրում է ինստիտուտի խորհրդի, գիտական խորհրդի ու ռեկտորատի նիստեր և ապահովում դրանց սերտ համագործակցությունը:

ը) սահմանված կարգով կարգապահական ներգործության միջոցներ է կիրառում աշխատողների և սովորողների նկատմամբ:

թ) ինստիտուտի ֆինանսական միջոցների շրջանակներում սահմանում է աշխատողների աշխատավարձի ու հավելավճարի չափերը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան լուծում աշխատողների և սովորողների պարգևատրման ու ֆինանսական օգնության հետ կապված հարցերը:

ժ) հրամաններ է արձակում ուսանողների և ասպիրանտների ընդունելության, կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու և որակավորման աստիճան շնորհելու մասին.

ժա) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ինստիտուտի պրոռեկտորներին՝ սահմանելով նրանց գործունեության ոլորտներն ու պարտականությունները.

ժբ) իր բացակայության ժամանակ ինստիտուտի ռեկտորի պարտականությունների կատարումը դնում է պրոռեկտորներից մեկի վրա.

ժգ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

#### **IV. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

31. Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ ֆակուլտետները, ամբիոնները, բաժինները, լաբորատորիաները և գիտական գրադարանը:

Ինստիտուտի տարածքային առանձնացված ստորաբաժանումներն են՝ մասնաճյուղերը:

Ինստիտուտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների իրավասությունները սահմանվում են սույն և իրենց կանոնադրություններով:

**(31-րդ կետը խմբ. 25.09.03 N 1283-Ն)**

32. Ինստիտուտն իր կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումների հետ միասին ուսումնական և գիտական ամբողջություն է, որի միասնությունն ապահովվում է ուսումնական, կրթական կամ գիտահետազոտական գործընթացների կազմակերպմանը նրա բոլոր ստորաբաժանումների պարտադիր մասնակցությամբ:

33. Ինստիտուտի ֆակուլտետները գործում են ֆակուլտետների կանոնադրությունների հիման վրա:

Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Ֆակուլտետն իր խնդիրներին և իր կողմից իրականացվող մանկավարժական, գիտական աշխատանքներին համապատասխան մշակում է իր հաստիքացուցակը, որը հաստատվում է ինստիտուտի ռեկտորի կողմից:

Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից և ուսումնական ու այլ ստորաբաժանումներից:

34. Ֆակուլտետի խորհուրդը քննարկում է ֆակուլտետի կանոնադրությունը և այն ներկայացնում ինստիտուտի գիտական խորհրդի հաստատմանը, լսում դեկանի ամենամյա հաշվետվությունները և գնահատում նրա գործունեությունը:

**(34-րդ կետը փոփ. 15.09.05 N 1724-Ն)**

35. Ֆակուլտետի խորհրդի կազմի ձևավորման ու գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի կանոնադրությամբ: Ֆակուլտետի խորհրդի նախագահը ֆակուլտետի դեկանն է:

36. Ֆակուլտետի խորհուրդը՝

ա) ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ (լաբորատորիաներ, բաժիններ) և

այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմավորելու և լուծարելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում ինստիտուտի ռեկտորին.

բ) լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքների, միջազգային կապերի և այլ գործունեության հետ կապված հարցեր.

գ) ինստիտուտի ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները՝ ինստիտուտի գիտական խորհրդում հաստատելու համար.

դ) ընտրում է ինստիտուտի գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչներին.

ե) լուծում է սույն կանոնադրությունից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր: Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են դրա՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի, աշխատողների, ուսանողների, ասպիրանտների և հայցորդների համար:

37. Ֆակուլտետի գործունեության կազմակերպումը և ղեկավարումն իրականացնում է ֆակուլտետի ղեկանն իր իրավասությունների սահմաններում և սույն կանոնադրության համաձայն:

Դեկանն ընտրվում է ինստիտուտի գիտական խորհրդի սահմանած կարգով՝ 5 տարի ժամկետով: Ինստիտուտի ռեկտորը ղեկանին պաշտոնի է նշանակում իր հրամանով՝ ղեկանի ընտրությունների արդյունքների հիման վրա:

Ինստիտուտի ռեկտորը ղեկանին պաշտոնի է նշանակում իր հրամանով՝ ղեկանի ընտրությունների արդյունքների հիման վրա:

**(37-րդ կետը խմբ. 15.09.05 N 1724-Ն)**

38. Ֆակուլտետի ղեկանը՝

ա) ղեկավարում է ֆակուլտետի կրթական, գիտական, միջազգային և այլ գործունեություն.

բ) ապահովում է ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.

գ) ինստիտուտի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ղեկանի տեղակալներին.

դ) սահմանված կարգով ինստիտուտի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու և համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ:

39. Ամբիոնները (բաժինները, լաբորատորիաները) ինստիտուտի ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացը կազմակերպող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնք գործում են սույն կանոնադրության և ֆակուլտետների ամբիոնների ու լաբորատորիաների օրինակելի կանոնադրության հիման վրա:

Ամբիոնի գիտամանկավարժական կազմը բաղկացած է պրոֆեսորներից, դոցենտներից, ասիստենտներից և դասախոսներից:

40. Ինստիտուտի ամբիոնների (բաժինների, լաբորատորիաների) պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը կատարվում է մրցութային կարգով, պայմանագրային հիմունքներով:

## **V. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

41. Ուսանողների ընդունելությունն ինստիտուտ կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

42. Ինստիտուտում ուսուցումն իրականացվում է առկա, հեռակա և դրսեկություն (էքստեռն) ձևերով:

43. Ինստիտուտում ուսումնական գործընթացը կազմակերպվում է երկու կիսամյակից բաղկացած ուսումնական տարով, յուրաքանչյուր կիսամյակ ավարտվում է քննաշրջանով:

44. Ինստիտուտում սահմանվում է ուսումնական պարապմունքների հետևյալ հիմնական տեսակները՝ դասախոսություն, գործնական (սեմինար), լաբորատոր և անհատական պարապմունքներ, արտադրական պրակտիկա, խորհրդատվություն, ստուգողական աշխատանքներ:

45. Ուսումնառության ընթացքում ինստիտուտն ուսանողներին ապահովում է ուսման համար անհրաժեշտ պայմաններով (ուսումնական և այլ գրականություն, լատենտողական և այլ տեխնիկական միջոցներ, արվեստանոցներ, լաբորատորիաներ, լսարաններ):

46. Ինստիտուտում կիրառվում է բարձրագույն կրթության հնգամյա՝ դիպլոմավորված մասնագետի և երկաստիճան կրթական ծրագրերով ուսուցման համակարգ: Ինստիտուտի ուսուցման յուրաքանչյուր աստիճանի շրջանավարտներին տրվում է համապատասխան որակավորում և ավարտական փաստաթուղթ (դիպլոմ):

Ուսուցման մեկ աստիճանից մյուսին անցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**(46-րդ կետը փոփ. 15.09.05 N 1724-Ն)**

47. Ինստիտուտում կատարվում են գիտահետազոտական և ստեղծագործական աշխատանքներ՝ գիտական խորհրդի կողմից հաստատված պլաններով, անցկացվում են գիտական համաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ, որոնք համակարգվում և կազմակերպվում են գիտահետազոտական բաժնի կողմից, որը նաև հեղինակային հսկողություն է իրականացնում գիտական և ուսումնամեթոդական հետազոտությունների արդյունքների նկատմամբ:

48. Գիտահետազոտական աշխատանքներին կարող են մասնակցել ինստիտուտի դասախոսները, գիտաշխատողները, ասպիրանտները, հետազոտողները, հայցորդները և ուսանողները, ինչպես նաև պայմանագրային կարգով հրավիրված այլ մասնագետներ:

## **VI. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ**

49. Ինստիտուտի աշխատողներն են պրոֆեսորադասախոսական կազմը, գիտական, ուսումնաօժանդակ և վարչատնտեսական աշխատողները:

50. Ինստիտուտի սովորողներն են ուսանողները, դրսեկները, ասպիրանտները, հետազոտողները և հայցորդները:

51. Ինստիտուտի աշխատողների և սովորողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ներքին կանոններով, կոլեկտիվ

պայմանագրով և ինստիտուտի այլ ակտերով:

52. Ինստիտուտի աշխատողները և սովորողներն իրավունք ունեն՝

ա) ընտրելու և ընտրվելու ինստիտուտի խորհրդում, գիտական խորհրդում, ֆակուլտետների խորհուրդներում:

բ) մասնակցելու ինստիտուտի գործունեությանն առնչվող խնդիրների քննարկմանը և ընտրովի մարմինների աշխատանքներին:

գ) միավորվելու արհմիություններում և հասարակական այլ կազմակերպություններում:

դ) օգտվելու ինստիտուտի ուսումնական, գիտական, սոցիալ-կենցաղային ստորաբաժանումների, ինչպես նաև գիտական գրադարանի ծառայություններից:

53. Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաաշխատողները և ուսանողներն օժտված են ակադեմիական ազատություններով:

54. Գիտամանկավարժական աշխատողների, ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների և հայցորդների համար ստեղծվում են գիտական ճշմարտության ազատ որոնումների, շարադրման ու տարածման նպաստավոր պայմաններ՝ այդ նպատակներին հատկացված միջոցների սահմաններում:

55. Ինստիտուտի աշխատողները և սովորողները պարտավոր են՝

ա) կատարել սույն կանոնադրությունից և ինստիտուտի այլ իրավական ակտերից բխող հանձնարարականներ:

բ) կատարել ինստիտուտի ղեկավար մարմինների որոշումները:

գ) ապահովել ուսումնական գործընթացի, անցկացվող գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

դ) մշտապես բարձրացնել իրենց որակավորումը:

ե) պահպանել և արդյունավետ ու խնայողաբար օգտագործել ինստիտուտի գույքը:

զ) հոգալ ինստիտուտի հեղինակության բարձրացման մասին:

56. Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմը ձևավորվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով:

57. Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմն ունի՝

ա) մասնագիտական գործունեության կազմակերպման և նյութատեխնիկական ապահովման իրավունք:

բ) գիտական հետազոտության ակադեմիական ազատության իրավունք:

գ) սեփական նախաձեռնությամբ հետազոտական թեմաներ ընտրելու և մշակելու ազատության իրավունք:

դ) պետական կրթության չափորոշիչներին համապատասխան ուսումնական դասընթացների բովանդակության, ծրագրերի ազատ որոշման իրավունք:

ե) անհատական առանձնահատկություններին համապատասխանող և ուսումնական գործընթացի բարձր որակն ապահովող նյութի շարադրման, դասավանդման մեթոդների ու միջոցների ազատ ընտրության իրավունք:

զ) համատեղությամբ գիտական, մանկավարժական և այլ բնույթի աշխատանքներ կատարելու իրավունք:

Գիտության և մանկավարժության բնագավառներում ակնառու նվաճումների համար ինստիտուտի աշխատողներին շնորհվում են ինստիտուտի մրցանակներ: Երիտասարդ գիտնականների համար սահմանվում է առանձին մրցանակ:

58. Ինստիտուտի ուսանողներ են համարվում հնգամյա ուսուցման ծրագրերով

բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար ինստիտուտի ռեկտորի կողմից հրամանագրված անձինք:

59. Հանրակրթական ուսումնառություն ստացած յուրաքանչյուր ոք վճարովի կամ անվճար հիմունքներով կարող է դառնալ ինստիտուտի ուսանող՝ մրցույթով կազմակերպված ընդունելության քննությունները հաջող հանձնելու, իսկ առանձին մասնագիտությունների գծով՝ հարցազրույց անցնելու դեպքերում:

Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վճարովի հիմունքներով ուսուցումն իրականացվում է կնքված պայմանագրի և նախարարության կողմից սահմանված կարգի համաձայն: 60. Ինստիտուտի ուսանողն իրավունք ունի՝

ա) ստանալու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ.

բ) հաճախելու դասախոսություններին.

գ) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ինստիտուտում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին.

դ) գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը, ինստիտուտի կառավարման մարմիններ ներկայացնելու ուսուցման որակի բարձրացման վերաբերյալ առաջարկություններ.

ե) օգտվելու ինստիտուտի գրադարանից, մարզական և առողջարանային, մշակութային-լուսավորչական ծառայություններից.

զ) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալու երկու որակավորման աստիճան.

է) ստեղծելու ուսանողական հասարակական կազմակերպություններ՝ ուսանողական կյանքին առնչվող հարցերի լուծման համար.

ը) սահմանված կարգով ընդգրկվելու ինստիտուտի և նրա ստորաբաժանումների ղեկավար մարմինների կազմում.

թ) մեկ ուսումնական տարվա ընթացքում ստանալու առնվազն 7 շաբաթ տևողությամբ 2 արձակուրդ:

61. Պետական պատվերով ընդունված և առկա ձևով կրթություն ստացող ուսանողները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին ապահովվում են ուսանողական կրթաթոշակներով: Ինստիտուտն իրավունք ունի սահմանելու անվանական կրթաթոշակներ և պետական կրթաթոշակների հավելավճարներ, ինչպես նաև ուսումը խրախուսող բարոյական և նյութական խթանման այլ ձևեր:

62. Արգելվում է ուսանողներին ներգրավել ուսումնական գործընթացով չնախատեսված աշխատանքներում՝ առանց վերջիններիս և (կամ) նրանց ծնողների (որդեգրողների և հոգաբարձուների) համաձայնության: Սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման միջոցների կիրառումն արգելվում է:

63. Ինստիտուտի ուսանողները պարտավոր են՝

ա) սահմանված ժամկետներում կատարել ուսումնական առաջադրանքները.

բ) տիրապետել բարձր որակավորման ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին.

գ) պահպանել ինստիտուտի կանոնադրությունը և ներքին կանոնները.

դ) հաճախել դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին.

ե) բարձր պահել ինստիտուտի պատիվն ու հեղինակությունը.



զ) պահպանել հասարակության բարոյական նորմերը:

64. Վճարովի հիմունքներով կրթություն ստացող ուսանողները պարտավոր են ժամանակին վճարել ուսման վարձը, որի չափը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշում է ինստիտուտը: Ուսանողները ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում կարող են հեռացվել ինստիտուտից:

65. Այն ուսանողները, ովքեր չեն կատարում ուսումնական պլանները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են ինստիտուտի ներքին կարգապահական կանոնները, ինստիտուտի ռեկտորի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև ինստիտուտից հեռացվելը:

66. Ինստիտուտի ուսումնական պլանները կատարած ուսանողներին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ):

67. Դիպլոմում նշվում են ուսումնասիրված դասընթացները, մասնագիտությունը (մասնագիտացումները): Ուսման մեջ հատուկ հաջողություններ ունեցող ուսանողներին տրվում է գերազանցության դիպլոմ:

68. Ինստիտուտի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունը ինստիտուտի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր:

69. Ինստիտուտի ասպիրանտ է համարվում բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող և մրցույթով անցած այն անձը, ով ուսանում է ասպիրանտուրայում ու նախապատրաստում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություն:

70. Ինստիտուտի դոկտորանտ է համարվում գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող և դոկտորանտուրա հրամանագրված այն անձը, ով նախապատրաստում է գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու ատենախոսություն:

71. Ինստիտուտի հայցորդ է համարվում բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող այն անձը, ով կցված է ասպիրանտուրային՝ թեկնածուական մինիմումի քննությունները հանձնելու և գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություն նախապատրաստելու համար առանց ասպիրանտուրայում ուսանելու, կամ այն անձը, ով ունի գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և նախապատրաստում է գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու ատենախոսություն: Հայցորդի կարգավիճակը չի կարող պահպանվել 5 տարվանից ավելի ժամկետով:

72. Ինստիտուտի գիտամանկավարժական կադրերի պատրաստումն ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդության ձևերով իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**VII. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

73. Հիմնադիրը ինստիտուտի կրթական, գիտական և այլ գործունեությունն ապահովելու նպատակով ինստիտուտին ամրացնում է հիմնադրման պահին նրա ունեցած շենքերը, շինությունները, կառույցները, հողամասերը և այլ անշարժ գույք, ինչպես նաև սարքավորումներ ու սպառողական, սոցիալական և մշակութային նշանակության շարժական այլ միջոցներ՝ անժամկետ և անհատույց՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու սույն կանոնադրությանը համապատասխան:

74. Ինստիտուտի գույքն ստեղծվում է հետևյալ աղբյուրներից՝

ա) պետական գույք, որը հանձնվել է ինստիտուտին անհատույց օգտագործման համար.

բ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պետական պատվերի համար, ինչպես նաև այլ ձևերով հատկացված միջոցներ.

գ) միջոցներ, որոնք գոյանում են ինստիտուտի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից.

դ) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումներ, կտակած գույք.

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

75. Ձեռնարկատիրական գործունեության հետևանքով ստացված շահույթն ուղղվում է ինստիտուտի կանոնադրական խնդիրների իրականացմանը:

76. Ինստիտուտի բոլոր եկամուտները և ծախսերը նախատեսվում և օգտագործվում են սահմանված կարգով՝ հաստատված տարեկան նախահաշվին համապատասխան:

77. Ինստիտուտն իրավունք ունի հիմնադրի կողմից սահմանված կարգով վարձակալության տալու ամրացված գույքը: Այդպիսի գործունեությունից ստացված վճարները սահմանված կարգով ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

78. Ինստիտուտի գործունեության նկատմամբ վերահսկողություն են իրականացնում հիմնադիրը, նախարարությունը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

79. Հաստատության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման (աուդիտի)՝ լիազորված պետական մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ ֆինանսների կառավարման պետական լիազոր մարմնի կողմից:

*(79-րդ կետը խմբ. 15.09.05 N 1724-Ն)*

80. Ինստիտուտը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

### VIII. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

81. Ինստիտուտի վերակազմակերպումը (միացում, միաձուլում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) և լուծարումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

82. Ինստիտուտի լուծարման հետևանքով գոյացած միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

*(հավելվածը լրաց. 13.03.03 N 250-Ն, լրաց., խմբ. 25.09.03 N 1283-Ն, լրաց. 19.05.05 N 603-Ն, խմբ., փոփ., լրաց. 15.09.05 N 1724-Ն, լրաց. 12.04.07 N 550-Ն, փոփ., լրաց. 27.01.11 N 59-Ն, լրաց. 01.11.12 N 1425-Ն, փոփ. 10.07.13 N 725-Ն)*

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար Մ. Թոփուլյան